

ՓՈԽՆՁԳ Ի ՄԱՏՆԵՆԱԳՐՈՒԹԵԼՆՅ՝

(Շ-ր-ն-ն-ն-ն-ն-ն-ն-ն)

Յաղագհ Կենդանեաց.

Զիք ինչ կենդանի բաց ի մարդոյ, որ ունիցի զօրպիսի եւ իցէ գիտութիւն Աստուծոյ:

Ի գաղանաց երկրի ոմանք են ջրային եւ ոմանք երկրահենցաղք:

Նուաստութիւնն բազում կենդանեաց է այնքան, զի զերկրաւոր սնունդըս իւրեանց հեշտեալ ի ձեռս բերենցուկաւ, որք եւ են թաղում, վասն զի սակք, կարաք, եւ խորտք երկայնագոյն պարանոցաւ սնանին:

Ոմանք ի կենդանեաց ծածկեալ են մորթով, ոմանք բրդեղէն հանդերձիւք, այլք թեւաւոր թեփով, զբաղումս փետրովք, զայլս թեփովք պատսպարեալ տեսանեմք:

Ընտանի անասունք, որք քան զամենայն կենդանիս զգեստաւոր գոլով ջրատութեան ոչ երբէք համբերեն:

Են քանի մի գաղանք, յորս գտանին զանազան օրինակք առաքինութեան, որպէս յառիւծն, իշուկն, եւ ի ձին:

Գաղանք վասն մարդոյ են ծնեալ:

Գաղանք, զորս վասն զուարճութեան պահպանեն, երբ առատութեամբ կերակրեն, յայնժամ են ազատանձն եւ ոչ երբէք հեշտեալ համբերեն անձամբ ըմբռնեալ:

Ի բաղմութենէ անասնոց, ոմանք վաւրն զգեցման, ոմանք վասն հերկման դաշտաց, ոմանք վասն բեռնակրու-

թեան, եւ այլք վասն հանդերձից մարմնոյ գործածեալ լինին:

Զին է քաջասիրտ, բարձրադարանոց, սրագլուխ, կարճորովայն եւ առոյգաւագակ:

Քանզի ձին վասն արագընթացութեան, եղն հերկագործութեան, շուկն վասն հետախուզութեան, որպէս մարդըն վասն մտածութեան ստեղծեալ են:

Զօրութիւն առիւծու է ագին, եւ ձիոյն ականջք:

Զոր օրինակ առիւծն վաղվաղակի զայրանայ ընդդէմ արանց քան թէ ընդդէմ կանանց:

Ոչ ոք ի գաղանաց է խոհեմ քան զփիղ:

Որպէս ի մեղուս ոչ փոքր զարմացման արժանաւոր բնութեան զօրութիւն գոյ քան զփիղս, եւ իմաստունք, նմանապէս մեծ եւ փոքր աշխատութիւնք զմեծագոյն արս ցուցանեն:

Արջք ի ձմերան յընթացս տասն եւ եօթներորդ աւուրց ծանր քրնով ըմբռնին:

Ռնդեղջիւրն է թշնամի փղի:

Զեղնուեն յայտնէ ոչ անձին ձեւք վասն բարձման բեռանց:

Ուղաք զչորս օր համբերեն ծարաւոյ, եւ լնանին՝ յորժամ պատահեսցի ըմպել, յապառնիս եւ յապագայս:

Շուկն է կենդանի կարեւոր բարեկամ մարդոյ:

Որպէս գետնառիւծն ամենայն գունոյ նմանի բաց ի սպիտակութենէ, այսպէս շողմարարն:

Վերին մասն կոկորդիլոսի է ամուր
եւ անթափանձելի իսկ ներքինն կակուղ
եւ թափանձիկ:

Կոկորդիլոսն ածէ զձուս որպէս ըզ-
սակս:

Թռչունք ի հետեւումն մարդկան
ձայնի հնչմամբ են ընդունակ:

Ոմանք ի թռչնոց շրջին որպէս ագ-
ռաւք: այլք ոստնուն որպէս ճնճղուկք:

Արծիւք զբոյնս իւրեանց ի ժայռս եւ
ի քարինս դնեն, եւ ի բարձրագոյն
ծերպս վիմարդէից:

Սոխակք այնքան գերեալ են յերգս:

Խորոք յորժամ տեղիս ընթանան՝
ընդ անցանելն ընդ ծով զեռանկիւնի
գործեն զձեւ:

Կռունկք յորժամ թռչին ի Կիլիկեա-
յէ՝ զխիճս եւ զմանրիկ քարինս առնուն
ի բերանս իւրեանց՝ առ ի չհանել ըզ-
ձայն, եւ այնպէս զեղինս լերանց ար-
ծիւք յաճախակի անլտանգ թռուցա-
նեն:

Վայրի հաւք եւ թռչունք թողլով
զփետուրս ջեռուցանեն զձագս: ոչ վըշ-
տագնելով ի ցրտոյ, եւ ինքեանց որոնեն
զյարմարաւոր տեղի վասն ծնանելոյ ըզ-
նոսա եւ կազմելոյ ինքեանց զանկողինս
եւ զբոյնս: ամենափափուկ ընկողմանին
իվերայ նոցա:

Յաղթող աքաղաղն իսկոյն երգովք
վկայի լինիլ անպարտելի նմանապէս ո-
մանք զչարագործութիւնս իւրեանց ի
բաց արկանելով յինքեանց լինին ծագ-
րական փողահարք իւրեանց գովասա-
նութեանց:

Որպէս ծիծռունք, որք յառաստագո
մարդկան տան բռնաւորին, նմանապէս

եւ ոմանք զբարեկամս իւրեանց հանա-
պաղորդ ի կատկածանս ունին:

Ոմանք ի ցնոց պատերազմեալ ընդ
ագռաւուց, եւ այնպէս մին զմիւսոյն
խորտակէ զձուս:

Ասեն, յորժամ ձկունք ածեն զձուս,
բարձի թողի առնեն:

Ասեն, կրիայն եւ կոկորդիլոսն զկնի
ածելոյն զձուս ելանեն ի ցամաք անդր,
զնոսա յերկիր թաղեն եւ ապա գնան:

Արագընթաց քան զամենայն կենդա-
նիս է գլբին:

Ո՛չ երբէք լուեալ է թէ կոկորդիլոսն,
ձինն, եւ կառուն անարգեալ եղեն յե-
գիպտացուոց:

Ոմանք յօձից ծնեալք արտաքոյ ջրոյ՝
ի սուղալն վաղվաղակի աշխատ լինին եւ
ի ջուր ձկալի:

Ոմանք ի միջատաց զերկու տեսակ
թեւս արտագրեն, որպիսի են ճանճք,
ոմանք զչորս տեսակս՝ որպիսի են մե-
ղուք:

Սուտակալք թէպէտ անձամբ անձին
ոչ գործեն զմեղր, սակայն ի վաստակս
այլոց մեղուաց մտանեն:

Թագաւորն մեղուաց միայն չունի ըզ-
խայթոց, եւ կամ թէ ունի՝ ոչ ի գործ
դնէ զայն, նմանապէս եւ իշխանաց
պարտ է լինել ամենողորմած:

Յորժամ պարք մեղուաց կամին տե-
ղափոխել, ունին սովորապէս յառա-
ջընթաց զգրոշակ, եւ ի թռչելն զչափա-
զանց հանեն զձայնս:

Թագաւորն մեղուաց զանազանէ յայ-
լոց:

Որպէս փոքրիկ մեղուք ի շրջագայելն
զամենեբումբ, զայն՝ որ է օգտաւէտ՝ ա-

ծէ ի փետակն՝ սապէս եւ ուսումնասէ-
րըն քաղէ յիւրաքանչիւր յիրաց որք
են օգուտ վարուց:

Պարտիմք նմանիլ մեղուաց՝ որք թա-
փառին՝ եւ զծաղկունս յարմարս վասն
գործելոյ զմեղր քաղեն:

Առ Հիպանեայ գետով՝ որ ի կողմանց
եւրոպիոյ ի ծով անդր հոսի ասէ Արիս-
տոտէլ՝ թէ ոմանք ի գաղանաց՝ որք
անդ ծնանին՝ մի օր վարեն զկեանս:

Որքան թռչունք թռչին՝ որքան ձը-
կունք լողան՝ որքան գաղանն փախու-
ցանէ՝ են կերակուր կոկորդի մերոյ:

Մեք կերակրիմք ցամաքային՝ ջրա-
յին եւ օդային անասնովք:

(Ի յեռ-էջն:)




ԳԷՈՐԳԵԱՆ ՀԱՅՈՑ ՃԵՄԱՐԱՆ
ՈՐ Ի ՄԱՅՐ ԱԹՈՌՆ ԱՐԱՐԱՏԵԱՆ.

Ի բարձրագէտ գաղաթան
Պաշտելի լերին Մասեաց,
Ահա թուուցեալ սըլանտն
Ողտճեմ՝ դասք աղանեաց,
Բերկրապատար խնդ. ի սիրտ
Յնծան անդ. Հայաստանեայց,
Քանդի ձօնեն քեզ ընծայ
Զծաղկեալ շիւղս ձիթենեաց:
Վեհ գաղաթ Արարատայ, —
Որ առաջին հանգրուան
Եղեր ի մէջ աշխարհի
Ընկալեալ Նոյեան տապան,
Որով զերձաւ արդարն Նոյ
Երկրորդ մեծ հայրն մարդկութեանս —
Քեւ մինչ ցարդ եւ յաւիտեան
Պանծայ Մայր մեր Հայաստան,
Երկիրն որ կայ շուրջ ըզքեւ
Անուանեալ Արարատեան,
Ի նմա երբեմն աշակերտը
Սահակեան եւ Մեօրօպեան,
Էին անխոնջ ժիր մըշակը
Շքեղ լեզուին Հայկական.

Աւր ճոխ արդեանց փառաւոր
Բաղում եղեն գրաւական,
Ուր յոգնաջան վաստակը
Մեր համայն արդ. Հայկաղանց
Զարդարեցին գիտութեամբք
Ի տես աղգաց եւ աղանց,
Տուեալ էր Հոգւոյն Որոյ
Նոցա շնորհս ի բարձանց,
Որոց երկանց եւ մատեանս
Ընկալաք թանկագին դանձ,
Եւ ուր նոքայն ճգնէին
Ի բուն վայրն մեր ծննդեան,
Շքեղարուեստ հոյակապ
Տեսանի արդ. Ճեմարան,
Ուստի յուսամք վայելել
Փրկաւետ գանձս գիտութեան,
Անձանձրոյթ աշխատութեամբ
Հայրապետի Հայկական,
Փութացարմը ժամանել,
Երիտասարդք Հայկածին,
Ի Մայր քաղաքն Հայրենեաց,
Յորում էջ Խնքն Միածին.
Քանդի սրտդամ միութեան
Ի հայրենի մեր գաւառ,
Առեալ բերէ ի վերուստ
Հայոց հրշտակն լուսաղարդ:
Հրաւէր կարգայ առ Աղբ մեր
Ուր ի կողմանս աշխարհի,
Թէ յերկնային Արարչէ
Զեզ արդ նոր ձիրք պարգեւի.
Զիրք նոր է քեզ Աղբ Հայոց,
Արարատեան կրթութիւն,
Որոյ խաղցրիկ ճաշակաւ
Վայելեցեալ բարութիւն:

ԳԳԻՐ ՆԱԽՈՒՄ ԶԱՐԱՐԱՆՅ.

Ի ԴԱՆԷ:



ԱՌ ԳՈՂԹԱՆ ՔՆԱՐ.

Բաղմաղարեան խոր քընով,
Խնչն ես քնած Գողթան քնար.
Քո լարերիդ մըրժումջը,
Է՞ր չի հնչում անդադար,
Քո քաջ որդւոց վեհ գործեր,
Գաղարել ես դու երգել,
Թմրութիւնը տիրել է,
Եւ լարերդ կաշկանդել: